ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԵՎ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԻՋԵՎ

ք.Երևան «10» 01 2023 թ.

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամը (այսուհետ՝ ԵՊՀ), ի դեմս ռեկտոր Հովհաննես Հովհաննիսյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամը (այսուհետ՝ ՀԱԱՀ), ի դեմս ռեկտոր Վարդան Ուռուտյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամը (այսուհետ՝ ՃՇՀԱՀ), ի դեմս ռեկտոր Եղիազար Վարդանյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կողմեր).

- բարձր գնահատելով գործընկերությունը, համագործակցությունը Աշխարհագրական տեղեկատվական տեխնոլոգիաների (GIT) ոլորտում,
- զարգացնելու համար արդեն ձևավորված համագործակցությունը,
- Աշխարհագրական տեղեկատվական համակարգերի ոլորտում ձեռք բերված փորձը, գիտելիքը, հմտությունները և կարողությունները՝ կրթական ծրագրերի, գիտահետազոտական աշխատանքների որակը բարձրացնելու նպատակով,
- նորարարական առաջարկները և արդի տեխնոլոգիական լուծումները համատեղ հետաքրքրություն ներկայացնող ասպարեզներում խթանելու համար,
- կարևորելով ակադեմիական, ուսանողական, գիտական և մշակութային համագործակցությունը համալսարանների զարգացման գործում,
- խրախուսելով գիտելիքի փոխանակումը, տեխնոլոգիական զարգացումը և նորարարությունը համալսարանների ու գիտահետազոտական կենտրոնների հետ գիտելիքի և համագործակցության բոլոր ոլորտներում,
- հաշվի առնելով փոխշահավետ համագործակցության նպատակը և Կողմերի պատրաստակամությունը կիրառելու իրենց հաստատությունների մտավոր, ֆինանսական և նյութատեխնիկական ներուժը,

կնքեցին սույն համագործակցության Հուշագիրը (այսուհետ՝ Հուշագիր) հետևյալի մասին.

I. Նպատակը

1.1 Սույն Հուշագրի հիմնական նպատակն է ԵՊՀ-ի, ՀԱԱՀ-ի և ՃՇՀԱՀ-ի միջև հաստատել գործընկերային հարաբերություններ, որոնք կնպաստեն Կողմերի միջև Աշխարհատեղեկատվական տեխնոլոգիաների (GIT) ոլորտում հետբուհական բարձրագույն կրթական համատեղ ծրագրերի իրականացմանն ու զարգացմանը, ինչպես նաև կրթական, գիտահետազոտական և նորարարական կապերի ամրապնդմանը:

II. Համագործակցության ուղղությունները

2.1 Կողմերի համագործակցությունը իրականացվում է հետևյալ հիմնական ուղղություններով.

- կրթական,
- գիտահետազոտական,
- միջազգային,
- տեղեկատվական,
- փորձագիտական և խորհրդատվական,
- նյութատեխնիկական,
- փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ:

III. Կողմերի պարտավորությունները

3.1 Սույն Հուշագրում սահմանված նպատակի իրագործման համար Կողմերը, հնարավորությունների սահմաններում, պարտավորվում են.

- մշակել և իրականացնել համատեղ հետբուհական կրթական ծրագիր Աշխարհատեղեկատվական տեխնոլոգիաների (GIT) ոլորտում,
- նպաստել Աշխարհատեղեկատվական տեխնոլոգիաների (GIT) ոլորտում դասավանդման, գնահատման և որակի մշտադիտարկման իրականացմանը՝ փոխանակելով ոլորտի գիտելիքը, փորձը և հմտությունները,
- խթանել կողմերի կառուցվածքային ստորաբաժանումների՝ ֆակուլտետների, ամբիոնների, վարչական ստորաբաժանումների, առանձին գիտահետազոտական և կրթական կենտրոնների համագործակցությունը,
- դյուրացնել ուսանողների, պրոֆեսորադասախոսական և վարչական անձնակազմի միջհամալսարանական շարժունությունը,
- իրականացնել համատեղ կրթական ծրագրի կրեդիտների փոխճանաչում,
- խթանել ոլորտի հետազոտական և զարգացման բազմակողմ ծրագրերին մասնակցությունը,

- ապահովել նյութատեխնիկական բազայի համատեղ օգտագործում՝ ըստ աշխատանքային անհրաժեշտության,
- խրախուսել գիտահետազոտական կենտրոնների, լաբորատորիաների ու մասնագիտացված այլ ստորաբաժանումների համատեղ նախաձեռնությունները և գիտելիքի, տեխնոլոգիաների փոխանակությունը,
- համատեղ իրականացնել միջազգային ծրագրեր և գիտահետազոտական աշխատանքներ,
- աջակցել միմյանց միջազգային հարթակներում գործընկերների ընտրության և գիտակրթական միջազգային միություններին անդամակցության հարցերում,
- իրականացնել հրատարակությունների և գրադարանային ֆոնդի համատեղ օգտագործում,
- տրամադրել փոխադարձ խորհրդատվություն Կողմերի գործունեությանն առնչվող հարցերի ու խնդիրների վերաբերյալ,
- համատեղ ընդլայնել աշխատաշուկայի հետ համագործակցությունը,
- բացահայտել կողմերի համար հետաքրքրություն ներկայացնող այլ ոլորտներ:

3.2 Կողմերը կարող են համատեղ իրականացնել ՀՀ օրենսդրությանը չհակասող իրենց գործունեությանը և մասնագիտացմանն առնչվող այլ աշխատանքներ:

3.3 Սույն Հուշագրի կատարումն ապահովելու համար Կողմերը առաջադրում են մեկական ներկայացուցիչ:

3.4 Կողմերի ներկայացուցիչները պարտավորվում են համատեղ կառավարել փոխգործակցության ընթացիկ հարցերը:

3.5Կողմերի ներկայացուցիչները տարին մեկ անգամ Կողմերին ներկայացնում են միջոցառումների տարեկան ծրագիր և նախորդ տարվա կատարած աշխատանքի մասին հաշվետվություն:

3.6 Տարվա միջոցառումների ծրագրով ստանձնած պարտավորությունների կատարման համար անհաղթահարելի խոչընդոտների առաջացման դեպքում Կողմերն այդ մասին անհապաղ տեղեկացնում են միմյանց:

IV. Հուշագրում փոփոխությունների իրականացումը, վեճերի կարգավորումը ու Հուշագրի դադարեցումը

4.1 Սույն Հուշագրով համագործակցության նախատեսված ձևերը կարող են իրականացվել Կողմերի միջև լրացուցիչ համաձայնագրի կնքմամբ:

4.2 Կողմերն իրավունք ունեն Հուշագրի մեջ կատարելու լրացումներ և փոփոխություններ՝ փոխադարձ գրավոր համաձայնությամբ: Փոփոխություններն ու լրացումները կատարվում են լրացուցիչ համաձայնագրի կնքմամբ և դառնում սույն Հուշագրի անքակտելի մասը:

4.3 Սույն Հուշագիրը Կողմերից ոչ մեկի համար ֆինանսական պարտավորություններ չի առաջացնում:

4.4 Կողմերի միջև վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ համաձայնության չգալու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
4.5 Սույն Հուշագիրը կարող է լուծվել Կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ՝ այդ մասին առնվազն երկու ամիս առաջ գրավոր տեղեկացնելով մյուս Կողմերին:

V. Հուշագրի գործողության ժամկետը

5.1 Սույն Հուշագիրը ուժի մեջ է ստորագրման օրվանից հինգ տարի ժամկետով և կարող է երկարաձգվել կողմերի համաձայնությամբ:

VI. Եզրափակիչ դրույթներ

6.1 Սույն Հուշագիրը կազմված է հայերեն, իրավաբանական հավասար ուժ ունեցող երեք օրինակից, և յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկ օրինակ:

VIII. Կողմերի տվյալները

Երևանի պետական համալսարան	**Հայաստանի ազգային ագրարային համալսարան**	**Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան**
Հասցե՝ Ալեք Մանուկյան 1, ք. Երևան 0025, Հայաստանի Հանրապետություն	Հասցե՝ Տերյան 74, ք. Երևան 0009, Հայաստանի Հանրապետություն	Հասցե՝ Տերյան 105, ք. Երևան 0009, Հայաստանի Հանրապետություն
Ռեկտոր՝ Հ. Հովհաննիսյան	Ռեկտոր՝ Վ. Ուռուտյան	Ռեկտոր՝ Ե. Վարդանյան

NOT AN OFFICIAL TRANSLATION

MEMORANDUM OF COOPERATION BETWEEN YEREVAN STATE UNIVERSITY (YSU), ARMENIAN NATIONAL AGRARIAN UNIVERSITY OF ARMENIA (ANAU), NATIONAL UNIVERSITY OF ARCHITECTURE AND CONSTRUCTION OF ARMENIA (NUACA)

This Memorandum of Cooperation is entered into by and between the Yerevan State University (YSU), represented by Rector Hovhannes Hovhannisyan, the National Agrarian University of Armenia (ANAU), represented by Rector Vardan Urutyan, and the Armenian National University of Architecture and Construction (NUACA), represented by Rector Eghiazar Vardanyan, collectively referred to as "the parties".

Recognizing the value of partnership and cooperation in the field of Geographic Information Technology (GIT), the Parties acknowledge their existing collaboration and aspire to further enhance it. With a shared goal of advancing educational, scientific, and cultural exchange, the Parties commit to promoting innovation and knowledge sharing within their institutions and beyond.

I. Purpose

The primary objective of this Memorandum is to foster collaboration between YSU, NAUA, and NUASA in the areas of postgraduate studies in Geographic Information Technologies (GIT), the development of joint higher education programs, and the strengthening of educational, research, and innovation ties.

II. Areas of Cooperation

The cooperation between the Parties shall encompass the following key areas:

- Educational initiatives
- Scientific research endeavors
- International partnerships
- Information exchange
- Expert consultation
- Logistics support

- Other mutually beneficial endeavors

III. Commitments of the Parties

To achieve the objectives outlined in this Memorandum, the Parties agree to:

- Develop and implement joint postgraduate education programs in GIT
- Foster the integration of GIT in education, assessment, and quality monitoring
- Support the establishment of collaborative departments, research centers, and educational cooperation initiatives
- Facilitate interuniversity mobility for students, faculty, and administrative staff
- Recognize credits from co-educational programs
- Promote industry research and development initiatives involving multiple stakeholders

IV. Implementation and Further Agreements

- Provide logistical and resource support as needed, including the sharing of research facilities and technology
- Collaborate on international programs and research endeavors, aiding in partner selection and participation in international scientific and educational forums
- Utilize shared resources effectively, including publication works and library facilities
- Offer mutual consultations and support on relevant activities and challenges
- Expand cooperation with the labor market to enhance practical outcomes
- Explore additional areas of mutual interest and collaboration

V. Dispute Resolution and Termination

In the event of disputes, the Parties shall seek resolution through negotiation. Should disputes persist, resolution will be pursued in accordance with the legislation of the Republic of Armenia. Either Party may terminate this Memorandum by providing written notice at least two months in advance.

VI. Duration and Amendments

This Memorandum is valid for five years from the date of signing and may be extended by mutual agreement. Amendments and additions to this Memorandum shall be made in writing and signed by all Parties.

VII. Final Provisions

This Memorandum is drafted in Armenian in triplicate, with each document holding equal legal weight. Contact information for the Parties is provided below.

Contact Information:

- Yerevan State University

  Address: Alek Manukyan 1, Yerevan 0025, Republic of Armenia

- National Agrarian University of Armenia

  Address: Teryan 74, Yerevan 0009, Republic of Armenia

- National University of Architecture and Construction of Armenia

  Address: Teryan 105, Yerevan 0009, Republic of Armenia